ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԻՇԱՊԱՔԱՐԵՐԸ ՏԱՐԱԳՐՈՍԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԲՈԲՈԽՅԱՆ Ա. Ա., ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կ. Հ.

XX դ. առաջին կեսը նշանավորվեց մի շարք նվիրյալ հայ գիտնականների հայտնությամբ, որոնք կարծես սեփական տեսակի ոչնչացման վտանգի գիտակցմամբ, եռանդուն գործունեություն ծավալեցին՝ նպատակ ունենալով հիմնավորել ինքնուրույն հայկական մշակույթի գոյության փաստը: Այդպիսի մտավորականներից էր Տարագրոսը, որի կատարած աշխատանքը նույնքան մեծ է, որքան նրա շուրջ ձևավորված լռությունը[1]:

---

[1] *Հոդվածում օգտագործված են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի (ՀԱԻ) և Հայաստանի ազգային պատկերասրահի (ՀԱՊ)՝ Տարագրոսի արխիվները (ձեռագրեր, լուսանկարներ, անձնական փաստաթղթեր): Տարագրոսին վերաբերող նյութեր կան նաև Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի ֆոնդերում: Օգտվելով առիթից՝ խորին շնորհակալություն ենք հայտնում ՀԱԻ-ի արխիվի ավագ ֆոնդապահ Լիլիթ Սիմոնյանին, որը սիրով մեզ տրամադրեց Տարագրոսի արխիվի նյութերը, այդ թվում՝ իր կողմից թվայնացված տարբերակով, ինչպես նաև՝ ՀԱՊ-ի տնօրենի պաշտոնակատար Հայկանուշ Հակոբյանին և ԳԱԹ-ի տնօրեն Կարո Վարդանյանին՝ իրենց արխիվներից օգտվելու թույլտվության համար: Օգտակար խորհուրդների համար շնորհակալ ենք նաև ՀԱԻ փոխտնօրեն Գագիկ Սարգսյանին: ՀԱԻ-ի արխիվային միավորների հղման չափանիշը համապատասխան թղթապանակն է իր ենթաբաժիններով. էջերի երկակի հղման դեպքում առաջին թիվը Տարագրոսինն է, երկրորդը՝ արխիվի աշխատակցինը: ՀԱՊ-ի և ԳԱԹ-ի արխիվները կողմնորոշվում են ըստ ֆոնդային (Ֆ) և ինվենտար (Ի) համարների:* ***Տարագրոս 1,*** *Հայկական գեղարվեստագիտության պատմությունը Հայաստանում և մինչև մեր օրերը.* ***1ա,*** *Ներածական, ՀԱԻ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Աշխատություններ, թղթ. 1/2/2, էջերի քանակը՝ 26 (սևագիր, տպագիր):* ***1բ,*** *Հայկական գրաֆիկան, ՀԱԻ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Աշխատություններ, թղթ. 1/2/9, էջերի քանակը՝ 9 (սևագիր, տպագիր):* ***1գ,*** *Հայկական քանդակագործությունը, ՀԱԻ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Աշխատություններ, թղթ. 1/2/11, էջերի քանակը՝ 76 (սևագիր, տպագիր և ձեռագիր):* ***1դ,*** *Քարամշակությունը Հայաստանում, ՀԱԻ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Աշխատություններ, թղթ. 1/2/12, էջերի քանակը՝ 27 (սևագիր, տպագիր):* ***Տարագրոս 2,*** *Հայկական փորագրական քանդակագործությունը քարի վրա, ՀԱԻ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Աշխատություններ, թղթ. 1/4, էջերի քանակը՝ 24 (սևագիր, տպագիր):* ***Տարագրոս 3,*** *Իմ համառոտ կենսագրությունը, ՀԱԻ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Կենսագրական, թղթ. 2/4, էջերի քանակը՝ 8 (սևագիր, տպագիր):* ***Տարագրոս 4,*** *Աշոտ Աբրահամյանի գրախոսությունը Տարագրոսի «Քանդակագործության պատմությունը» աշխատանքի վերաբերյալ, 1942 թ., ՀԱԻ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Կենսագրական, թղթ. 2/2, էջերի քանակը՝ 2 (սևագիր, տպագիր):* ***Տարագրոս 5,*** *Краткая автобиография, Архив ИАЭ, Фонд Тарагроса, Биография, папка 2/1, количество страниц 13 (черновик):* ***Տարագրոս 6,*** *Հայկական արվեստի տեխնոլոգիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Արմֆան, Ե., 1941, ՀԱՊ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Ֆ–131, Ի–14538, էջերի քանակը՝ 112 (պատրաստ տպագրության, ոչ ամբողջական):* ***Տարագրոս 7,*** *Հայկական արվեստի տեխնոլոգիան, 1941, ՀԱՊ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Ֆ–131, Ի–14538, էջերի քանակը՝ 327 (սևագիր, տպագիր):* ***Տարագրոս 8,*** *Ս. (պետք է լինի Հ[ակոբ] - հեղինակներ) Զորյանի կարծիքը Տարագրոսի «Հայկական ժողովրդական կերպարվեստը և ար-հեստները» աշխատանքի վերաբերյալ, 1941 թ. (՞), ՀԱՊ արխիվ, Տարագրոսի ֆոնդ, Ֆ–131, Ի–17341, էջերի քանակը՝ 1 (ձեռագիր):* ***Տարագրոս 9,*** *Հովհաննես*

Տարագրոսի աշխատանքներում կարմիր թելի նման անցնում է ինքնուրույն հայ արվեստի, իր լեզվով ասած՝ «հայկական ոճի» գոյության գաղափարը[2]: Նրան անհանգստացնում է այդ ոճի տեսանելի «մայրամուտը»[3], ինչը նա կարծես փորձում է վերակենդանացնել իր տարաբնույթ գործերի միջոցով: Այս աշխատանքի նպատակն է հակիրճ անդրադառնալ Տարագրոսի ժառանգությանը և կենտրոնանալ նրա քննարկած խնդիրներից միայն մեկի՝ վիշապաքարերի վրա, հուշարձանի մի տեսակ, որն ակնհայտորեն արտահայտում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների այդ նույն ինքնուրույն ոճը:

Կենսագրական տվյալներ. *Տեր-Վարդանյան Տարագրոսը (28.02. 1878 թ., Երևան – 30.03.1953 թ., Երևան) սովորել է Երևանի Թեմական դպրոցում, ապա 1900 թ. մեկնել է Ռուսաստան՝ կրթությունը շարունակելու (հմմտ. նկ. 1):*

նկ. 1

1908 թ. ավարտել է Մոսկվայի Ստրոգանովի անվան գեղարվեստի ուսումնարանը, 1915 թ.՝ Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի օֆորտի բաժինը: 1907-1917 թթ. Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերության

Թումանյանի երկու նամակները Տարագրոսին, 1922 թ., ԳԱԹ արխիվ, Հովհաննես Թումանյանի ֆոնդ, N 713 և 714, էջերի քանակը՝ 2 (ձեռագիր): ***Տարագրոս 10,*** *Տարագրոսի շնորհավորական նամակը և հեռագիրը Ավետիք Իսահակյանին, 1945 թ., ԳԱԹ արխիվ, Ավետիք Իսահակյանի ֆոնդ, N 1670, էջերի քանակը՝ 2 (ձեռագիր, տպագիր):*

[2] *«Հայկական ոճ» եզրը կիրառում է նաև Տարագրոսի բարեկամ Թ. Թորամանյանը (հմմ.* **Թորամանյան Թ.,** *Ակնարկ Հայաստանի հին ճարտարապետության վրա (ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատությունները, 1935, N 1, էջ 111), որի նկատմամբ Տարագրոսն ունեցել է հատուկ հարգանք՝ նրան նվիրելով իր «Հայկական արվեստի տեխնոլոգիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գիրքը: Թորամանյանին նա միշտ հիշատակել է իր դասերի ժամանակ (տե՛ս* **Մազմանյան Մ., Պապուխյան Ն., Թորամանյան Գ.** *(խմբ.), Ժամանակակիցները Թորոս Թորամանյանի մասին, Ե., 2005, էջ 300): Տա-րագրոսը համահեղինակել է Թորամանյանի մահախոսականը «Խորհրդային Հայաստան» թերթի 1934 թ., N 52-ում՝ «Գիտության վաստակավոր գործիչ Թորոս Թորամանյանի հիշատակին» վերնագրով:*

[3] *Իր աշխատանքներից մեկում Տարագրոսը գրում է. «Հայկական արվեստի անկումը պիտի համարել XVII դ. սկզբից մինչև մեր օրերը» (****Տարագրոս 7,*** *էջ 15):*

կազմում, կոմսուհի Պրասկովյա Ուվարովայի ղեկավարությամբ, որպես ճարտարապետ, աշխատել է Հայաստանում, մասամբ նաև Վրաստանում՝ հետազոտելով բազմաթիվ հնագիտական հուշարձաններ (նախաքրիստոնեական և քրիստոնեական շրջանի ամրոցներ, կամուրջներ, պալատներ, վանքեր, եկեղեցիներ՝ հեղինակելով 1177 չափագրություններ): 1910-1915 թթ. համագործակցել է Թիֆլիսի Հայկական ազգագրական ընկերության հետ: 1914-1916 թթ. Ռուսաստանի Գիտությունների ակադեմիան նրան հրավիրել է մասնակցելու Անիի պեղումներին: 1917 թ. Մոսկվայի Հնագիտական ընկերության կողմից արժանացել է պրոֆեսորի կոչման: 1921 թ. վերադառնալով Հայաստան՝ նշանակվել է Էջմիածնի թանգարանի տնօրենի տեղակալ: Միաժամանակ, մինչև 1935 թ., նա աշխատակցել է Պատմության և գրականության ինստիտուտին, Կուլտուրայի պատմության ինստիտուտին, Հնությունների պահպանության կոմիտեին: Տարագրոսը շփումներ է ունեցել ժամանակի նշանավոր մարդկանց հետ (Հովհաննես Թումանյան, Ավետիք Իսահակյան, Մարտիրոս Սարյան, Նիկողայոս Մառ, Թորոս Թորամանյան, Աշխարհիբեկ Քալանթար և այլք)[4]:

Ստեղծագործական ժառանգությունը. *Տարագրոսի ժառանգությունը կարելի է բաժանել գեղարվեստական գործերի, չափագրությունների և գիտական աշխատանքների: Գեղարվեստական գործերի (էսքիզներ, քանդակներ, գեղանկարներ, մանրանկարներ, լուսանկարներ, որմնանկարներ[5], գրաֆիկական աշխատանքներ[6], մոդելներ[7], ևն) մի մասը գտնվում է մասնավոր հավաքածուներում և թանգարաններում[8]: Պատմական հուշարձանների չափագրություններից ևս պահպանվել են մի շարք օրինակներ[9]: Ինչ վերաբերում է գիտական աշխատանքներին, ապա բացի մի քանի հոդվածներից (տպագրված «Գեղարվեստ» (1917 թ.), «Տեխնիկան մասսաներին» (1934 թ.) և «Սովետական արվեստ» (1940 թ.)*

---

[4] *Մանրամասների համար տե՛ս* **Յովհաննիսեան Կ.,** *Վարպետաց վարպետ Տարագրոսը (Հայկազեան հայագիտական հանդէս 2011, N Լ.Ա, էջ 663–678): Թումանյանի և Իսահակյանի հետ ունեցած առնչությունները տե՛ս* ***Տարագրոս 9,*** *էջ 1–2,* ***Տարագրոս 10,*** *էջ 1–2:*

[5] *Վարդգես Սուրենյանցի և Սերգեյ Մերկուրովի հետ Տարագրոսը ստեղծել է Յալթայի հայկական եկեղեցու որմնանկարները:*

[6] *Հմմտ. օրինակ՝* **Շահազիզ Ե.,** *Հին Երևանը, Ե., 2003, էջ 214 (Նորքի հին կամուրջը):*

[7] *Տարագրոսի Գառնիի տաճարի վերակազմության մանրակերտը տե՛ս* **Թորամանյան Թ.,** *Հայկական ճարտարապետություն 1, Ե., 1942, էջ 282, նկ. 185: Չի բացառվում, որ Տարագրոսը մասնակցել է տաճարի նախնական վերակազմության աշխատանքներին իր գործընկեր Նիկողայոս Բունիաթյանի հետ:*

[8] *Օրինակ՝ նրա կտավներից երկուսը գտնվում են Երևանի պատմության թանգարանի, իսկ գծանկարներից մոտ երեսունը՝ Հայաստանի ազգային պատկերասրահի պահոցներում:*

[9] *Հմմտ. մի շարք եկեղեցիների (***Լալայեան Ե.,** *Վայոց-ձոր (Ազգագրական հանդես, 1916, N 26, էջ 5–34) կամ Անիի (***Марр Н. Я.** *Ани, М.-Л., 1934) հատակագծերը:*

հանդեսներում), Տարագրոսի գործերը չեն հրատարակվել. դրանք գտնվում են հիշյալ արխիվներում:

«Հայկական կիրառական արվեստը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (= «Հայկական կերպարվեստի գործնականը հին Հայաստանում») գիրքը Տարագրոսը կազմել է ՀՍՍՀ Արվեստի գործերով կոմիտեի պատվերով 1941 թ.[10]: Այն հանձնվել է տպագրության Գիտությունների ակադեմիայի Հայկական բաժանմունքի Հայաստանի բաժնին, սակայն գրքից տպագրվել է միայն մեկ նմուշ՝ «Հայկական արվեստի տեխնոլոգիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» վերնագրով[11]: Հայրենական պատերազմի պատճառով տպագրությունն ընդհատվել է: «Հայկական գեղարվեստագիտության պատմությունը հին Հայաստանում և մինչև մեր օրերը» գիրքը գրվել է Պատմության և գրականության ինստիտուտի հետ պայմանավորվածությամբ 1935-1938 թթ.[12]: Հայտնի է «Հնագույն Հայաստանի փորագրությունը մեր թվարկությունից առաջ և հետո, մինչև XVII դար» հոդվածը:

---

*[10] Այս աշխատանքի վերաբերյալ պահպանվել են երկու կարծիք՝ գրված Աշոտ Աբրահամյանի (գիրքը կոչում է՝ «Քանդակագործության պատմությունը», տե՛ս **Տարագրոս 4,** էջ 1–2) և Հակոբ Զորյանի կողմից (գիրքը կոչում է՝ «Հայկական ժողովրդական կերպարվեստը և արհեստները», տե՛ս **Տարագրոս 8,** էջ 1), որոնք այն համարում են այս բնագավառում անդրանիկ գործ, որ լիովին արժանի է հրատարակության:*

*[11] Այդ օրինակը պահվում է ՀԱՊ-ի արխիվում (**Տարագրոս 6**), իսկ ՀԱԻ-ի արխիվում են գտնվում աշխատանքի որոշ ձեռագրեր: Տպագիր օրինակն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Ներածություն, Գլուխ Ա. Ճարտարապետություն, Գլուխ Բ. Քանդակագործություն, Գլուխ Գ. Նկարչություն, Գլուխ Դ. Գեղարհեստագիտություն (прикладное искусство)». վերջին գլուխը բաղկացած է այս ենթավերնագրերից՝ «Գորգագործություն, Զուլհակագործություն և կտավագործություն, Կավագործություն, Բրու-տություն»: Ինչպես կարելի է ենթադրել «Սովետական Հայաստան» թերթի մի հայտարարագրից, այս օրինակում պակասում է միայն Ե Գլուխը, որն անվանված է եղել «Երաժշտություն» («Գի-տությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը տպագրության է հանձնել գեղարվեստագետ պրոֆեսոր Տարագրոսի «Հայկական արվեստի տեխնոլոգիան հնագույն շրջաններից մինչև մեր օրերը» հետաքրքիր աշխատությունը: Գիրքն ընդգրկում է 1. Ճարտարապետություն, 2. Քանդակագործություն, 3. Նկարչություն, 4. Գեղարհեստագիտություն, 5. Երաժշտություն: Ընկ. Տարագրոսի այս աշխատությունն ունի հարուստ նկարազարդում՝ մոտ 200 նկար: Գրքի ձևավորումը կատարել է ինքը՝ հեղինակը», տե՛ս **Սովետական Հայաստան,** 1941, N 224, 20.09):*

*[12] Այս աշխատանքն առկա է և՛ ՀԱԻ-ի («Հայկական գեղարվեստագիտության պատմությունը Հայաստանում և մինչև մեր օրերը» անվամբ, տե՛ս **Տարագրոս 1**), և՛ ՀԱՊ-ի («Հայկական արվեստի տեխնոլոգիան» անվամբ, տե՛ս **Տարագրոս 7**) արխիվներում: ՀԱՊ-ում նյութերն ավելի դասակարգված են, բոլորը տպագիր են, որոնցից վերականգնում ենք աշխատանքի բովան-դակությունը հետևյալ հաջորդականությամբ՝ «Ներածություն, Ճարտարապետություն, Մանրանկարչություն, Որմնանկարչություն, Գեղարհեստագիտություն, Գրաֆիկա, Նկարչություն, Մագաղաթը պատրաստելու ձևը, Կավագործություն, Մետաղամշակություն, Մանվածային արվեստ, Փայտամշակություն, Քարամշակություն»: Սակայն ՀԱՊ-ի նյութերում պակասում են «Ոսկերչությունը» և «Քանդակագործությունը» գլուխները, որոնք առկա են ՀԱԻ-ում: Երկու արխիվների նյութերում կան որոշ տարբերություններ: Վիշապաքարերի խնդրի համար ավելի էական է ՀԱԻ-ի տարբերակը, որն էլ որպես հիմք ենք ընդունում այս աշխատանքում:*

Հեղինակը պատրաստել է նաև այլ գիրք՝ Էջմիածնի Մատենադարանի 10000 ձեռագրերի հետազոտության հիման վրա, որը մինչև նրա մահը գտնվել է Նկարիչների միությունում[13]*:*

Տարագրոսի աշխատանքները բնույթով գործնական են, ընդգրկմամբ՝ հանրագիտարանային և վերաբերում են հայ արվեստի տարբեր բնագավառներին (ճարտարապետություն, քանդակ, որմնանկար, մանրանկար, ներկանյութեր, զարդանախշ, մետաղա/կավա/ ապակեգործություն և այլն): Լինելով պրակտիկ վարպետ՝ Տարագրոսն անձամբ փորձել և կիրառել է ձեռագրերում պահպանված բաղադրատոմսեր ու ժողովրդական վարպետներից վերցված գիտելիքներ: Այդ աշխատանքներն ունեն գիտակրթական հսկայական նշանակություն[14]*:*

Վիշապաքարերի խնդրի քննարկումը. *Արխիվային նյութերի մեջ մեր ուշադրությունը գրավեցին Տարագրոսի գրառումները վիշապաքարերի մասին՝ Հայաստանի բարձր լեռնային շրջաններում ի հայտ եկող բրոնզ-երկաթեդարյան քարե, կենդանակերպ (ձկնակերպ, գլակերպ և ձկնացլակերպ) պաշտամունքային կոթողներ, որոնք հայտնի դարձան XIX-XX դդ. սահմանին*[15]*: Համապատասխան տվյալներ հանդիպում են ստորև բերված երեք աշխատանքներում (նյութերը տպագիր են և ձեռագիր, հիմնականում՝ սևագրեր, հաճախ ոչ կանոնակարգված, որից էլ բխում են լեզվական անհարթությունները):*



նկ. 2

---

[13] **Սիմոնյան Լ.,** *Տարագրոսի ժառանգության վերականգնումը. ծրագիր, անտիպ, Ե., 2011,* **Յովհաննիսեան Կ.,** *նշվ. աշխ., էջ 672-673:*

[14] **Սիմոնյան Լ.,** *նշվ. աշխ.:*

[15] **Ատրպետ,** *Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929,* **Марр Н. Я., Смирнов Я. И.** *Вишапы, Л., 1931,* **Пиотровский Б. Б.** *Вишапы, Л., 1939.*

1. «Հայկական գեղարվեստագիտության պատմությունը Հայաստանում և մինչև մեր օրերը».

1ա. Գրքի «Ներածական» մասում, որ բաղկացած է 26 էջից, ընդհանուր անդրադարձ է կատարվում կիրառական արվեստի առանձին բնագավառներին: Քանդակագործության վերաբերյալ բաժնում Տարագրոսը մեկ էջի սահմաններում գրում է. «Հայկական քանդակագործության մասին խոսելիս չի կարելի աչքաթող անել արձանագործությունը, որի զարգացումն ու գործածությունը և գործադրությունը Հայաստանում, ինչպես փորագրական և բարելիեֆային քանդակներ, լայնածավալ տեղ են բռնել, այնպես էլ դրան հակառակ՝ կլոր քանդակը – արձանագործությունը չի տարածվել: Չնայած այդ բանին, նա եղել է մեր… առաջ: Հեթանոս հայերը եղել են կռապաշտ: Պաշտել են զանազան կենդանիներ, արձաններ, ի թիվս որոնց և վիշապներ: Այդ վիշապ-արձանները այժմս էլ գտնվում են մեզ մոտ Թոխմախ գյուղի մոտ (ոչ Երևանի Թոխմախ գյուղը): Այդ կլոր քանդակները ներկայացնում են ձկան արձան, երկարությամբ 2 և 1/2 մետր»[16]:

1բ. «Հայկական գրաֆիկան» մեկ էջանոց ձեռագիրը ինը էջից բաղկացած թղթապանակում է, որտեղ գրված է. «Որ հնումը Հայաստանում եղել է նկարչություն, դրան ապացույց կարող են ծառայել նախաքրիստոնեական վիշապների արձանները, որոնց վրա քանդակված են զանազան թռչուններ, եզան գլուխներ[17]:

1գ. «Հայկական քանդակագործությունը» ձեռագրի թղթապանակը բաղկացած է հիմնականում խաչքարերի, տապանաքարերի և առանձին հուշարձանների նկարագրություններից (56+14+6 էջ): Ուշագրավ է, որ խաչքարերի նախապատմությանն անդրադառնալիս, հեղինակը հիշում է ֆալլուսները. մասնավորապես բերում է Էջմիածնի այգիների մոտ գտնվող մի օրինակ (տեղափոխ-ված Պատմության թանգարան), որին Վարդավառի տոնին այցելում էին չբեր կանայք և աղոթում[18]: Այստեղ, առանձին թղթերի վրա, Տարագրոսն անդրադառնում է նաև վիշապաքարերին: Մի դեպքում բերում է տարբեր դարաշրջանների քանդակագործական միավորների ցանկ, որտեղ հեթանոս շրջանի հուշարձանների համատեքստում հիշատակում է «վիշապներ, կոթողներ, ֆալլուս, իշխանական արձաններ, Տրդատի պալատը»[19]: Մեկ այլ տեղ գրում է. «Այս վիշապաձուկ առասպելական կենդանու ոճավորված արձանները քանդակված են ծակոտիներ ունեցող և լավ հղկված քարի վրա: Սրանցից շատերի վրա կան քանդակներ, որ

---

[16] ***Տարագրոս 1ա,*** *էջ 9/224:*

[17] ***Տարագրոս 1բ****, էջ 8/398:*

[18] ***Տարագրոս 1գ,*** *էջ 139:*

[19] ***Տարագրոս 1գ,*** *էջ 58:*

ներկայացնում են գոմեշի գլուխ, ձուկ, կռունկներ և այլն, շատ լավ ստիլիզացիայի է ենթարկված և շատ լավ քանդակված, կարծես թե այս օրվա վարպետի ձեռքով լինի քանդակված: Սրանք բոլորն էլ տնկած են հողի վրա, ազատ, սարահարթ տարածության վրա: Այս վիշապաձուկ արձանները ուղղահայաց կանգնեցնել շատ անհարմար է, թողնել գետնին, փչանում են, տեղական խաշնարածները կամ հովիվները կփչացնեն: Ավելի լավ պահելու համար հարկավոր է դրանց հավաքել մի թանգարան ու դնել մի մետր բարձրության պատվանդանի վրա, որը դիտելու համար շատ հարմար կլիներ և թե ուսումնասիրելու համար՝ պիտանի: Որպես հեթանոսական, հայկական քանդակագործության մի հազվագյուտ էլեմենտ, լավ ծանոթանալու համար մենք կառաջարկենք կարդալ, որտեղից որ ես եմ վերցրել նկարները, իբրև աղբյուր՝ Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишапы, 1931»: Ապա, հաջորդ տողին, բացատրություն է տրված. «Նկար-[ներ]ը իբրև աղբյուր են զետեղված այստեղ»[20]: Սրանից հետո բերում է նկարների հետագա դասավորման ծրագիրը. «Հեթանոսական քանդակագործությունների նկարները՝ 1) ֆալլուս, պատմ. թանգ., 2) վիշապներ՝ Մառի գրքից, 3) կոթողներ՝ թանգարան (ինձ մոտ կա), 4) իշխանական արձաններ (Գագիկ թագ.), 5) Անահիտ աստվածուհու նկարը (Ալիշանից)»[21]:

Այս ենթագլխի առանձին մի էջ վիշապաքարերի ցանկ է, որտեղ, նախ՝ Տարագրոսը գրում է, թե՝ «Այդ վիշապաձուկ աժդահաները առայժմ գտնվել են հետևյալ վայրերում Գեղարդա լճերի մոտ», ապա՝ նույնությամբ բերում է Մառի և Սմիռնովի գրքի վերջում զետեղված վիշապաքարերի 24 նկարների ցանկը՝ ռուսերեն և ֆրանսերեն[22]:

Ենթագլխի էջերից մեկը կոչվում է «Վիշապներ կամ վիշապաձկներ», որում գրված է. «Հայկական քանդակագործության մեջ, ինչպես ասացինք, մենք տեսնում ենք բուսական, կենդանական և երկրաչափական քանդակներ զանազան նյութերից պատրաստված կամ զանազան նյութերի վրա քանդակված: Ամենաշատ նյութը, որ կա Հայաստանում՝ քարն է, պարզ է, որ քանդակագործության մեջ պիտի թագավորեր քարը…: Մեր քանդակների շարքերում մենք տեսնում ենք նաև հնադարյան ծագում ունեցող քանդակագործություններ քարի վրա, դրանք վիշապաձկներն են, որ գտնվում են Գեղամա լեռների Գեղարդավանք կոչված վայրերում՝ Թոխմախան Գյոլ, Աժդահա յուրտ[23] կոչված տեղերում: Այդ վիշապաձուկ քանդակները, թվով 25 հատ, գտնվում են վերոհիշյալ վայրերում: Դրանց

---

[20] **Տարագրոս 1գ,** էջ 2/56՝ տպագիր, ուղղումներով ու **Տարագրոս 1գ,** էջ 19/156՝ ձեռագիր, առանց ուղղումների. էջերն ունեն նույն բովանդակությունը՝ մասնակի տարբերություններով:

[21] **Տարագրոս 1գ,** էջ 56ա՝ ձեռագիր:

[22] **Տարագրոս 1գ,** էջ 13/260՝ ձեռագիր:

[23] Աժդահա յուրտի համար հմմտ. նկ. 3, որն արվել է 2012 թ. (հեղինակներ):

մեծությունը՝ 4 մետր 75 սանտիմետր է, լայնությունը՝ մինչև 55 սանտիմետր: Լինում են նաև 3 մետր 40 սանտիմետր երկարությամբ և մի քիչ փոքր չափով (էջ 61-62): Այդ վիշապաձուկ հուշարձանները երկրպագելու և աղոթք անելու գալիս էին թե՛ հայերը, թե՛ թուրքերը և թե՛ քուրդերը: Եվ կարծեմ, թե մինչև օրս էլ այդ պաշտամունքը շարունակվում է[24]:

2. «Հնագույն Հայաստանի փորագրությունը մեր թվարկությունից առաջ և հետո, մինչև XVII դար» (= «Հայկական փորագրական քանդակագործությունը քարի վրա») հոդվածի ձեռագիրը բաղկացած է երեք առանձին էջերից (1-3): Սրանց գալիս են լրացնելու ևս 21 էջեր (1-21), որոնք վերնագրված են ռուսերեն: Այստեղ խոսքը փորագրական/շինարարական տեխնիկայի մասին է, տրվում է հայ միջնադարյան և նոր շրջանի արվեստագետների ցանկ: Վիշապաքարերին Տարագրոսն անդրադառնում է հիշյալ երեք էջերի սահմաններում. «Հայկական փորագրությունը քարի վրա, լինի նա հարթաքանդակ, բարձրաքանդակ, թե բոլորաքանդակ, ծնունդ է առնում հայկական ճարտարապետության հետ միասին՝ ըստ դարերի, փոփոխվելով ձևերի և... միասին: Հայկական քանդակագործությունը բաժանվում է հինգ ճյուղերի. բուսական, կենդանական, մարդկային, երկրաչափական և խառը»: Ապա Տարագրոսը տալիս է վերջիններիս բացատրությունը և որպես օրինակ բերում Աղթամարի եկեղեցու և խաչքարերի պատկերագրությունը, որոնցում այդ բոլոր տարրերն ի հայտ են գալիս միասին: Այս ամենից հետո գրում է. «Եթե չլիներ նկարչությունը, չկարողանային նկարել, ապա չէին կարող քանդակել այդ ձկնանման վիշապների վրայի զարդաքանդակները: Բացի վիշապների վրայի զարդաքանդակներից, մեզ հաջողվել է տեսնել նաև հեթանոսական կոթողներ, որոնց վրա կան նույնպես նկարներ: Ասելս այն է, որ վարժ նկարներ չէին քանդակի, ուրեմն հայկական կերպարվեստի մեջ գրաֆիկան, գրչանկարչությունն ու գրչագրությունը պիտի գործադրված համարել սկսած հեթանոսական Հայաստանից մինչև մեր օրերը, իսկ գունանկարչությունը՝ այն պահից, երբ տառերի գյուտը եղավ: Որովհետև, երբ ձեռքով կարողացան գրել, այն ժամանակ կկարողանային նաև նկարել: Եվ այդպիսով սկսվում է հայկական կերպարվեստի զարգացումը»[25]:

3. «Հայկական արվեստի տեխնոլոգիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» գրքի տպագրված միակ օրինակի առաջին՝ «Ճարտարապետություն» գլխում Տարագրոսը ուշագրավ տեղեկություններ է բերում Գեղարդավանքից: Հեղինակը

---

[24] **Տարագրոս 1գ,** էջ 12/150՝ ձեռագիր:

[25] **Տարագրոս 2,** էջ 1–3/63–65: Այս նույն հատվածը ՀԱՊ-ի նյութերում բերված է «Հայկական արվեստի տեխնոլոգիան» = «Հայկական գեղարվեստագիտության պատմությունը Հայաստանում և մինչև մեր օրերը» գրքի «Գրաֆիկա» բաժնում (**Տարագրոս 7,** էջ 96-97), ինչը վկայում է, որ Տարագրոսը կարող էր նույն նյութը օգտագործել տարբեր հրատարակություններում:

նշում է, որ երկհարկ և ժայռափոր այդ վանքի շինությունները երկու դարաշրջանի են պատկանում՝ հեթանոսական և քրիստոնեական, իսկ ժայռերը ներկայացնում են ջրապաշտական և քրիստոնեական պաշտամունքը, ապա ավելացնում է. «Ջրի կուլտը գտնվում է երկրորդ հարկի եկեղեցու տանիքի վրա՝ երդիկի չորս կողմը (նկ. 52 = մեր նկ. 2ա – հեղինակներ): Այդ երդիկի տակ ներսի կողմից ժայռի մեջ գեղեցիկ քանդակած խոյակներով ու խարիսխներով չորս սյուն (պիլոն) է փորված (նկ. 53 և 54 = մեր նկ. 2բ, գ – հեղինակներ)»[26]:

Ինչո՞վ է առնչվում այս հաղորդումը վիշապաքարերին: Նախ, բացի նրանից, որ Գեղարդավանքի տարածքը վաղուց է հարաբերվել ջրի հնագույն պաշտամունքին և հարակից Գեղամա լեռներում գտնվող վիշապաքարերին[27], ուշագրավ է նաև

---

[26] ***Տարագրոս 6,*** *էջ 44-45: Տարագրոսն այստեղ նկատի ունի վանքի գլխավոր մուտքից դեպի հյուսիս-արևմուտք գտնվող ժայռափոր կառույցը, որը հայտնաբերվել էր 1932 թ. ՀՍԽՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի հետախուզական աշխատանքների ժամանակ՝ հիշյալ ինստիտուտի նախագահ Հակոբ Զորյանի կողմից. վերջինս նկատում է մի հողաբլուր, որի ճեղքվածքից պարզվում է, որ սա ժայռի մեջ փորագրված սրբատաշ շինության վերնամաս է: Շուտով Զորյանը սկսում է ստուգողական պեղումներ, որոնց մասնակցում է նաև Տարագրոսը. որոշվում է ավելի հիմնարար պեղումներ իրականացնել Թորամանյանի ղեկավարությամբ (***Զորյան Հ.,*** *Գեղարդաձորում կատարված պեղման նախնական արդյունքները (ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատությունները, 1935, N 1, էջ 129-133): Նույն թվականին պեղումները շարունակում է Թորա-մանյանը. աշխատանքներին նորից մասնակցում է Տարագրոսը՝ որպես չափագրող: Պեղվում է 5 մ բարձրությամբ, 9 x 15 մ չափերի ժայռափոր դահլիճ: Կառուցվածքի հարավային ճակատի վրա պահպանված զույգ որմնակամարները և նրանց միջև ստեղծված կիսագմբեթաձև վերջավորությամբ խորշը, ինչպես և արևմտյան ու հյուսիսային ճակատների մոտ թափված՝ ստալակտիտներով մշակված ճարտարապետական բեկորները Թորամանյանին բերում են այն եզրակացության, որ այս քարափորը ունեցել է աշխարհիկ նշանակություն (գրադարան, ժողովասրահ, սեղանատուն) (***Թորամանյան Թ.,*** *Գեղարդաձորի մեջ կատարածս պեղումների տեղեկագիրը (ՀԽՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատությունները, 1935, N 1, էջ 134-141): Զորյանը նույնականացնում է քննարկվող շինությունը Հովհաննես Դրասխանակերտցու մի վկայության հետ և նշում, որ այն պիտի գոյություն ունենար IX դ. առաջ (****Զորյան Հ.,*** *նշվ. աշխ., էջ 132): Թորամանյանը ակնարկում է, որ նման շինությունների ակունքները կարող են շատ վաղ լինել (****Թորամանյան Թ.,*** *նշվ. աշխ., էջ 140-141): Դժբախտաբար, պեղումներից որոշ ժամանակ անց, ժայռը փլվել է, և այս «արտակարգ հետաքրքիր կառուցվածքը» ամբողջովին ոչնչացվել (****Սահինյան Ա. Ա.,*** *Գառնիի և Գեղարդի ճարտարապետական հուշարձանները, Ե., 1969, 39–40): Պետք է ասել, որ և՛ Զորյանը, և՛ Թորամանյանը հատուկ շեշտում են Տարագրոսի անունը Գեղարդավանքի հիշյալ պեղումների ընթացքում: Մի դեպքում Թորամանյանը գրում է, թե այնքան կատարյալ էր այս շինությունը, որ «Ընկ. Տարագրոսը չափագրելով և գծագրելով՝ հիացած էր տիրող համաչափության վրա» (****Թորա-մանյան Թ.,*** *նշվ. աշխ., էջ 139. հմմտ. նաև* ***Թորամանյան Թ.,*** *Հայկական ճարտարապետություն 2, Ե., 1948, էջ 277, 279): Գեղարդավանքի արշավախմբի, այդ թվում՝ Տարագրոսի մասին հիշողություններ ունեն Թորամանյանի որդին՝ Գառնիկ Թորամանյանը, այդ արշավախմբի անդամ Մեդրակ Բարխուդարյանը, ինչպես նաև Ռուբեն Զարյանը (****Մազմանյան Մ., Պապուլիյան Ն., Թորամանյան Գ.,*** *նշվ. աշխ., էջ 231-232, 315, 335, 441): Գեղարդի պեղումներին Տարագրոսի մասնակցության մասին տե՛ս նաև* ***Սահինյան Ա. Ա.,*** *նշվ. աշխ., էջ 39:*

[27] *Այսպես, ըստ վիշապաքարերի հայտնագործող Ատրպետի՝ Գեղարդի «մեհյանը» այն վայրն է, որտեղ նախնական ծեսեր են իրականացվել մինչև ջրի պաշտամունքին և ջրանցքներին առնչվող վիշապաքարերին մոտ լեռներ բարձրանալը՝ վարդավառի տիպի տոների ժամանակ (****Ատրպետ,*** *Վիշապամայր, Ալեքսանդրապոլ, 1912): Թորամանյանը ևս շեշտում է, որ «Այրի վանքի ձորը և քարայրները կապ պետք է ունենան*

տանիքի վրայի պատկերը, որն, ինչպես ճիշտ նկատել է Տարագրոսը, ջրային գծագիր է. ավելին, այն էական զուգահեռներ ունի Արագածի և Գեղամա լեռների ջրաբաշխական համակարգերի «քարտեզների» պատկերների հետ, որոնք արված են առանձին դիտարկումների և Մեծամորում հայտնաբերված մի հնագույն փորագիր - «քարտեզի» մեկնաբանության շնորհիվ: Ըստ Քալանթարի և այլ հետազոտողների՝ վիշապաքարերը տեղադրված են եղել այդպիսի ջրաբաշխական համակարգերի հանգուցակետերին[28]: Եթե ճիշտ է այս տեսակետը, ապա Արագածի

նախաքրիստոնեական պաշտամունքների հետ, ինչպես Բագնայրը իր քարայրներով և աշտարակաձև մնացորդով, ինչպես Բազարանը իր քարայրներով, Աղավնատուն գյուղը, Հաջի-Ղարայի գերեզմանատան զույգ աշտարակների և «Արդար Դավիթ» անվանված աշտարակի մնացորդները» (**Թորամանյան Թ.**, *նշվ. աշխ., էջ 141): Գեղարդավանքի «հեթանոսական շրջանի սրբազան ավազանի» խնդիրը վիշապաքարերի, ջրի և պտղաբերության պաշտամունքի համատեքստում է քննարկում Էմմա Խանզադյանը (***Խանզադյան Է. Վ.**, *Գառնի IV, Ե. 1969, էջ 150)՝ մեջբերելով Նիկոլայ Տոկարսկու միտքը, թե ավազանի մեջ ստորերկրյա աղբյուրներից ցայտող ջուրը «չբեր կանանց սնոտիապաշտական հարգանքն է վայելում»* (**Токарский Н. М.** *Архи-тектура Армении, Е., 1961, с. 298*): *Ստեփան Մնացականյանը նշում է, որ Գեղարդավանքի գավթի կառուցման վայրի ընտրության գործում որոշակի դեր կարող էր խաղալ ժայռերից բխող «Սուրբ աղբյուրը», որը հետագայում՝ XIII դ. երկրորդ քառորդում պարփակվեց ժայռափոր եկեղեցու մեջ: Աղբյուրի համբավը տարածված էր ողջ Հայաստանում, և նրան երկրպագելու էին գալիս անգամ հեռուներից. «Հազիվ թե կարելի լինի կասկածել, որ այս աղբյուրը պաշտամունքի առարկա էր դեռևս շատ հին ժամանակներում և վանական կոմպլեքսի հիմնադրումն իսկ թելադրված էր հենց նրա «զորությամբ»* (**Մնացականյան Ստ.**, *Երևանը և նրա շրջակայքը, Ե., 1971, էջ 80-81): Խոսելով Գեղամա լեռների վիշապաքարերի և վերջիններիս ջրի պաշտամունքին առնչվելու մասին՝ հեղինակը գրում է. «Մյուս կողմից, հազիվ թե պատահական լինի Գեղարդի «Սուրբ աղբյուրի» առկայությունը հենց այս, հնադարյան ջրի պաշտամունքին նվիրված լեռնալանջերում: Ամենայն հավանականությամբ, Գեղարդի այս աղբյուրի պաշտամունքը ևս ունի իր շատ խոր արմատները, այն միայն սրբագործվել է քրիստոնեության կողմից, դարձել քրիստոնեական սրբավայր»* (**Մնացականյան Ստ.**, *նշվ. աշխ., էջ 86-87): Բացի աղբյուրից, Գեղարդավանքում կան վիշապա-քարերին առնչվող այլ խորհրդանիշներ, ինչպես, օրինակ՝ Պռոշյանների դամբարանի հյուսիսային կողմի ութանիստ սյան վրա հենվող կամարների ճակատային մասին քանդակված տոհմանշանը՝ եզան գլուխը, կամ գլխավոր եկեղեցու հարավային մուտքի՝ իրար նայող թռչունների, և նրանցից վեր՝ խաչաձև պատկերված առյուծի և ցլի հինարևելյան ոճի պատկերները (**Մնացականյան Ստ.**, *նշվ. աշխ., էջ 79, 82, 84):*

[28] **Քալանթար Ա.**, *Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային Հայաստանում (Տեղեկագիր ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի, 1937, N II, էջ 171-194),* **Շիրմազան Գր.**, *Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Ե., 1962, էջ 49–61,* **Խաչատրյան Մ. Մ.**, *Արագածոտնի նախաուրարտական ջրաբաշխական համակարգի փորագրված գծագիրը (ՊԲՀ, 1971, N 3, էջ 127-137),* **Хачатрян М. М.** *О древней ирригационной сети Арагацотн (Вестник Ереванского университета, 1976, N 1, с. 121–129),* **Карапетян Л. Л.** *Ирригация и орошение в земледелии Армении эпохи поздней бронзы (ПБЖ, 1979, N 1, p. 59-74*), **Գասպարյան Բ.** *(խմբ.), Գինին հայոց ավանդական մշակույթում, Ե., 2005, էջ 21, սխեմա 1: Մեծամորի (Սև բլուրի) հիշյալ «թասաձև փորվածքներին» անդրադարձել է նաև Տարագրոսի գործընկեր Եվգենի Բայբուրթյանը, որը դրանք համեմատում է Արմավիրի համանման «հիերոգլիֆների» հետ և նշում. «իսկ թե դրանք վերաբերում են բնակավայրի գունազարդ խեցեղենի փուլին, թե ավելի ուշ շրջանի, առայժմ չենք կարող ասել»*(**Байбуртян Е.** *Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Е., 2011, с. 67, рис. 21-22*): *Կարևոր է, որ հնագետն ակնարկում է, թե այդ փորվածքները կարող են վերաբերել «գունազարդ խեցեղենի փուլին»՝ այսինքն, արդի ընկալմամբ, միջին բրոնզի դարին, ինչը համընկնում է վիշապաքարերի գոյության շրջանին:*

ջրաբաշխական համակարգը պատկերող Մեծամորի «քարտեզից» բացի, կունենանք երկրորդ օրինակը, որը պատկերում է Գեղամա լեռների նույնատիպ համակարգը. այս իմաստով, հնարավոր է այդ պատկերի վաղ թվագրումը:

նկ. 3

Ի մի բերելով վերն ասվածը՝ նկատենք, որ հանձին Տարագրոսի՝ վիշապաքարերի վերաբերյալ գրառումների, գործ ունենք ուրվագրերի հետ, որոնք հետագայում պիտի վերածվեին կազմակերպված տեքստի: Առանձնացնելով հեղինակի հիմնական պատկերացումները քննարկվող կոթողների վերաբերյալ՝ պետք է ասել, որ Տարագրոսը 1. դրանք բնորոշում է որպես «վիշապ կամ վիշապաձուկ», 2. հիշատակում է միայն Գեղամա լեռների օրինակները (թվով՝25)՝ հենվելով իր հիմնական աղբյուր Մառի ու Սմիռնովի գրքի վրա, 3. ըստ այդմ, ճշտիվ նկարագրում է դրանց տեղանքը, դիրքը, շեշտում սինկրետիկ պաշտամունքային երևույթ լինելը, 4. վիշապաքարը ներկայացնում է «որպես հեթանոսական հայկական քանդակագործության մի հազվագյուտ էլեմենտ» (ֆալլուսներ, կոթողներ, ար-

ձաններ շարքի մեջ), համարում դրա վաղագույն արտացոլումը՝ տիպաբանելով որպես կենդանական կլոր քանդակ, 5. վիշապաքարերի գոյության հանգամանքը համարում է ապա-ցույց առ այն, որ հնագույն Հայաստանում եղել են քանդակագործական լուրջ ավանդույթներ («կարծես թե այս օրվա վարպետի ձեռքով լինի քանդակված»), 6. առաջ է քաշում վիշապաքարերի պահպանության և թանգարանացման հարցը. 7. էական է Գեղարդի ջրաբաշխական համակարգի պատկերի հիշատակումը:

Իսկ որտեղի՞ց էին Տարագրոսի գիտելիքները վիշապաքարերի մասին, և արդյո՞ք նա անձամբ տեսել էր դրանք: Նախ պետք է ասել, որ Տարագրոսն ուղղակիորեն առնչվել է հնագիտությանը, մասնակցել է պեղումների (բացի Անիից, նաև մերձվիշապաքարային Գառնիում՝ 1926-1933 թթ. և Գեղարդում՝ 1932-1935 թթ.), իրականացրել հուշարձանների չափագրումներ (այդ թվում՝ մերձվիշապաքարային Իմիրզեկում, Մեծ Գիլանլարում և Բայբուրթում 1907-1908 թթ.[29]), շփում է ունեցել վիշապաքարերին քաջածանոթ հնագետների՝ Մառի, Թորամանյանի, Քալանթարի հետ[30]: Ուշագրավ է, որ 1922 թ. Էջմիածնի Կուլտուրապատմական ինստիտուտի կազմում Տարագրոսը մասնակցել է Արագած լեռան ուսումնասիրման գիտարշավին, եղել դրա նախաձեռնողներից մեկը: Արշավը տեղի է ունեցել հիշյալ ինստիտուտի գիտական քարտուղար Երվանդ Տեր-Մինասյանի ղեկավարությամբ. արշավին, բացի Տարագրոսից, մասնակցել են Թորամանյանը, Գարեգին Հովսեփ-յանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը: Արշավախմբի այցելած

---

[29] *Տե՛ս* ***Տարագրոս 3,*** *էջ 3:*

[30] **Յովհաննիսեան Կ.,** *նշվ. աշխ., էջ 663, 675,* ***Տարագրոս 3,*** *էջ 5: Քալանթարի հետ, Անիից բացի, Տարագրոսը շփվել է նաև 1933 թ. Գառնիի պեղումների ընթացքում (****Տարագրոս 3,*** *էջ 8): Ի դեպ, վերոհիշյալ ջրաբաշխական համակարգերի մասին տեղեկությունները Տարագրոսը կարող էր ստանալ նաև Քալանթարից, որն այդ խնդրի լավագույն մասնագետն էր: Տարագրոսի և հիշյալ հնագետների առնչությունների մասին չեն պահպանվել մանրամասն տվյալներ, բացակայում են նամակները: Գարեգին Լևոնյանին 1915 թ. Թիֆլիս ուղղված նամակում Թորամանյանը նշում է, թե Տարագրոսի նամակը դնում է ծրարի մեջ և խնդրում այն իրեն հասցնել (***Թորամանյան Թ.,*** *Նամակներ, էջ 240), իսկ Տեր-Հակոբյանին 1924 թ. Երևան ուղղված նամակում Լևոնյանը գրում է, թե նամակ է ստացել Տարագրոսից (****Զաքարյան Ա.,*** *Սենեքերիմ Տեր-Հակոբյանին ուղղված նամակներ (Լրաբեր, 1985, N 1, էջ 82-83), ինչից կարելի է ենթադրել այդպիսի նամակագրության գոյությունը: Քալանթարին 1924 թ. ուղղված նամակում ևս Թորամանյանը հիշում է Տարագրոսին. մասնավորապես, խոսելով Սեֆիաբատի (Եղեգնուտ) քանդվող մատուռի մասին՝ հարցնում է, թե ե՞րբ պիտի միջոցներ տրամադրվեն աշխատանքներ սկսելու համար, ապա ավելացնում. «Տարագրոսը եկավ այս պահուս և խիստ հուսահատական լուր տվեց» (****Թորամանյան Թ.,*** *նշվ. աշխ., էջ 289): Հայտնի է նաև 1925 թ. Հնությունների պահպանության կոմիտեի 15 անդամների հետ Հաջիղարա (Այգեշատ) գյուղը տանող ճանապարհին տեղի ունեցած ավտոմոբիլային վթարի դեպքը, որից առավել վնասվում են Թորամանյանը (ուղեղի ցնցում) և Տարագրոսը (դեմքի կեսը ընդմիշտ խաթարող պատռվածք): Մյուս անդամները (Թամանյանը, Քալանթարը, Տեր-Հակոբյանը, Սարյանը և այլք) ստանում են թեթև վնասվածքներ (****Թորամանյան Թ.,*** *նշվ. աշխ., էջ 451. հմմտ. նաև տարբեր անձանց հիշողությունները՝ Տարագրոսի հիշատակությամբ՝* **Մազմանյան Մ., Պապուխյան Ն., Թորամանյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 96, 230, 245-246, 292-294):*

ամենաբարձր կետը եղել է Ամբերդը: Աշխատանքները հիմնականում կենտրոնացել են միջնադարյան հուշարձանների վրա, սակայն հիշվում են նաև «Օղուզի գերեզմանները», քարայրները, հնագույն ամրոցները (Լազրևան, Թաքիա, Փարպի, Փաթրինջ, Այարլու, Ղզլթամիր)[31]: Այս ընթացքում Տարագրոսը կարող էր տեսնել մերձամբերդյան վիշապաքարերը: Նմանապես Իմիրզեկ և Մեծ Գիլանլար բնակավայրերի շրջանում 1907-1908 թթ. աշխատելիս՝ նա կարող էր ծանոթանալ Գեղամա լեռների օրինակներին, որոնք այդ վայրերում են գտնվում. սակայն այդ մասին հիշատակումներ չկան[32]: Միայն մեկ վկայություն կա, որ կարող է ենթադրել տալ, թե Տարագրոսը տեսել է դրանք. մասնավորապես «Հայկական փորագրական քանդակագործությունը քարի վրա» հոդվածում նա գրում է. «Բացի վիշապների վրայի զարդաքանդակներից, մեզ հաջողվել է **տեսնել** *(ընդգծումը հեղինակներինն է) նաև հեթանոսական կոթողներ, որոնց վրա կան նույնպես նկարներ»[33]:*

Եզրակացություն. *Այսպիսով, Տարագրոսը XX դ. առաջին կեսի հայ մշակույթի նշանավոր գործիչներից է, որն աչքի է ընկել գեղարվեստի և գիտության բնագավառներում, և որի գործունեությունը հանիրավի դուրս է մնացել մասնագիտական ուշադրությունից: Տարագրոսի աշխատանքները հատկապես ուշագրավ են հայ արվեստի և հնագիտության համար, քանի որ դրանցում դիտարկվում են տեխնիկատեխնոլոգիական խնդիրներ, որոնք գրեթե չեն քննարկվել հայագիտության մեջ: Ներկայացվող հոդվածը նպատակ ուներ անդրադառնալ հնագույն Հայաստանի հոգևոր մշակույթի կարևորագույն երևույթի՝ վիշապաքարի՝ Տարագրոսի վերլուծություններին: Ըստ այդմ, կարելի է ասել, որ Տարագրոսը առաջին հեղինակն է, որը վիշապաքարերին անդրադարձել է զուտ որպես արվեստաբան և տեխնոլոգ՝ խիստ կարևորելով այդ երևույթը հնագույն հայ արվեստի համատեքստում՝ ըստ էության, վիշապաքարը համարելով իր քննած «հայկական ոճի» դրսևորման ամենավաղ օրինակը:*

---

[31] **Տեր-Մինասյան Ե.,** *Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները (Էջմիածին, 1961, N Ե, էջ 45–56), հմմ.* **Մազմանյան Մ., Պապուխյան Ն., Թորամանյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 415-416,* **Յովհաննիսեան Կ.,** *նշվ. աշխ., էջ 665: Այս արշավի վկայագրերի մասին Տարագրոսը գրում է. «Այդ իմ գիտական աշխատանքները մնացել են հիշյալ ինստիտուտում» (**Տարագրոս 5**, էջ 4):*

[32] **Уварова П. С. и Кучук-Иоанесова Х. И.** *Монастырь Айриванк или Кегарт (Материалы по археологии Кавказа XII, М., 1916).*

[33] ***Տարագրոս 2,*** *էջ 2/64:*

СТЕЛЫ–ВИШАПЫ В ИССЛЕДОВАНИЯХ ТАРАГРОСА

БОБОХЯН А. А., ОГАНЕСЯН К. О.

Резюме

Тарагрос Тер-Варданян (1878-1953) является одним из видных деятелей армянской культуры первой половины XX века. Его работы представляют значительный интерес для истории армянского искусства. Однако эти исследования по сей день остаются неопубликованными. В 1907-1917 гг. в составе Императорского Московского археологического общества, а в 1921-1935 гг.–в числе сотрудников Эчмиадзинского музея, Института истории и литературы, Института материальной культуры и Общества по охране древностей Тарагрос в качестве архитектора принял участие в изучении многих памятников. Особый интерес представляют собой работы Тарагроса, посвященные каменным стелам–вишапам как феноменам духовной культуры доисторической Армении.

THE VISHAP STONES IN THE RESEARCHES OF TARAGROS

A. BOBOKHYAN, K. HOVHANNISYAN

Abstract

Taragros Ter-Vardanyan (1878-1953) is one of the prominent representatives of Armenian culture in the first half of the 20th century. His works are especially interesting for art history of Armenia, in which technical and technological aspects are touched upon, which have been hardly considered in Armenian Studies. However most of these works remain still to be unpublished. Being a member of Royal Archaeological Society in Moscow (1907-1917) and Ejmiatsin Museum, Institue of History and Literature, Institute of Culture History as well as Society of Preservation of Antiquities in Armenia (1921-1935) he took part in investigations of many archaeological sites as architect. Present article, based on materials kept at archives of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA and the National Gallery of Armenia, reflects only a single aspect discussed by Taragros – the case of vishap stone stelae, an important phenomenon of spiritual culture of prehistoric Armenia.